

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 15-Դ Դ.

Այվելի քան հարյուր տարի նվաճված Հայաստանում թուրքմենական կարա-կոյունլու և Ակ-կոյունլու ցեղերի վարած տնտեսական կործանարար քաղաքակա-նությունը երկիրը հասցրեց կործանման եզրին: Իրենց բերած ավերումներով այդ ցեղերի բախումները նվազ դաժան չէին, քան սելջուկների ու մոնղոլների բոլոր արհավիրքները: Գրեթե անընդհատ, տարիներ շարունակ սրի ու գերության էր մատնվում խաղաղ ազգաբնակչությունը Հայկական լեռնաշխարհում «ի յամենեին չար եւ ի դառն եւ ի մեղութեան ժամանակի, յորում ամի բոլոր աշխարհս Հայոց՝ ի յառ եւ ի յաւարի, ի սուր եւ ի գերութիւն մատնեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց եւ ի ձեռս անարեւն եւ անիծեալ ազգին մետողաց», - ողբում է Թումա արեղան 1425 թ. կարա-կոյունլու իսքանդարի կողմից Վանի գրավման առիթով Աղթամարում գրք-ված Ավետարանի մի հիշատակարանում¹: Նույն անցքերը արձագանք են գտել մաս Թովմա Մեծոփեցու գրքում հետևյալ խոսքերով. «Եւ երկիր եւ աշխարհ ամենայն լցաւ գերեօք, լալով, սգով և կոծով»²: Օգտվելով անհիշատակության պայ-մաններից, Հայաստանի տարբեր շրջաններում թուրքմենական և քրդական առան-ձին ցեղապետեր հաստատել էին իրենց տիրապետությունը: Իսքանդարը փորձում էր ստեղծել ինքնիշխան մի պետություն, թեմուրիդներն իրենց հերթին փորձում էին պահպանել իրենց գերիշխանությունը Լամկ-Թամուրի նվաճած երկրների վրա: Այդ պատճառով, մի կողմից թեմուրիդների եւ, մյուս կողմից՝ վերջինների ու Հայաստա-նում ինքնագլուխ դարձած ցեղապետերի միջև տեղի էին ունենում անընդմեջ կռիվ-ներ: Ինչպես վկայում է 1425 թ. գրված հիշատակարանը, Ակ-կոյունլուների առաջ-նորդ Օսմանը, հարձակվելով Արճեշի ու Արծկեի շրջանների վրա, կոտորել ու գերի է տարել տեղի բնակչությանը³: Հաջորդ՝ 1426 թ. զարմանը, Թովմա Մեծոփեցու

¹ Տե՛ս Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 353:

² «Պատմութիւն Լամկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա Վարդապետի Մեծոփեց-ւոյ», Փարիզ, 1860, էջ 121 (այսուհետեւ՝ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն):

³ Ցուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի, էջ 353:

վկայությամբ, Արծնի շրջանը ենթարկվել է մոր ավերածության, երբ Բաղեշի քրդերը Սավալանի առաջնորդությամբ գրավել են քաղաքը ու բնակչությանը ենթարկել կողոպուտի և կոտորածի⁴։ Պատմիչի վկայությամբ, մույն բախտին է արժանանում մահ բնակչությունը Թոխատի, Սեբաստիայի, Խարբերդի ու Դերջանի, ուր 1435 թ. այցելում է Իսկանդարը⁵։ Պակաս ավերիչ հետևանքներ չունեցան և ներքին երկպառակտչական կոիվները, որոնք շարունակական երևույթներ էին։ Նման մի բախման պատկեր է նկարագրում Թովմա Մեծոփեցին, երբ Իսկանդարի ու մրա եղբոր՝ Ջհանշահի միջև 1437 թ. ծագած կոիվներից ավերածության է ենթարկվում Արարատյան մահանգը⁶։

Աղբյուրների վկայությամբ երկրի քայքայման պատճառներից եղել են ինչպես բազմաթիվ ու բազմատեսակ հարկերը, այնպես էլ մրանց զանձման դաժան ձևերն ու ամեն տեսակի երաշխիքի բացակայությունը։ Բնակչության վճարած գումարները մույն այդ վճարողներից երկրորդ, երրորդ անգամ էին զանձվում։ Ահա թե ինչ է ասում այդ մասին ժամանակի գրիչներից մեկը. «Եւ ի հասանել ի պահս առաջնաւորաց դարձեալ միաբանեալ արարին խորհուրդ եւ գնացին ասպատակաւ ի գաւառն Մանձկերտու եւ անդ է (եօթն) դշաղ զամէն ի սուր քաշեցին։ Եւ զոչխարն ամէն եւ զտաւարն առին եւ բերին յԱրճեշ։ Եւ դարձեալ մոր ոճիւր գործեցին ի յԱրճեշ, զինչ որ յԱրծկէ, եւ այլ անելի։ Դժ (400) բիր մալ ուղեցին յաւուր բարիկենդանին, որ անկաւ յամէն գլուխ Դժ (4000) դեկան, եւ յամէն գութան Ժժ (10000) դեկան։ Եւ ողորմելի քրիստոնէայքն ոչ գիտէին, թէ զի՞նչ ստացեն։ Եւ դիմեցին չար կատաղիքն ի վերայ Բ (2) տան, մէկ հաճօլայ (փոխանակագրով դրամ պահանջող) եւ բազում տանջանօք չարչարէին՝ կախէին, ծեծէին եւ ոչ գտանէր դրամ. վասն որոյ թէ հոգոյ էր եւ թէ մարմնոյ, թէ ի վերայ հողոյք, թէ ի ներքեւ հողոյ, թէ զինդ է, թէ մատանի է, թէ լանջանոց է, թէ ոսկի է, թէ արծաթ, զամէն զինչ ունէին, տուին եւ դեռ ոչ կարացին ազատիլ։ Եւ անողորմն իմամացիքն մտանէին ի տներն, զինչ որ գրաստ կայր, եւ գէր տաւար, զամէն առին և քաշեցին»⁷։

Չափազանց կարևորվում էր Հայոց Եկեղեցու դերը, քանի որ պետականության կորստից հետո ժողովուրդը կաթողիկոսական գահի մեջ էր որոնում այն, ինչը կորցրել էր։ «Կաթողիկոսությունն այդ ժողովրդի միակ ազգային իշխանությունն էր, որ Եկեղեցու միջոցով և մանավանդ Եկեղեցու համար՝ կատարում էր ազգի զանազան մասերը միացնողի, հավաքողի խոշոր դերը»⁸։ Այս առումով մա կապված էր աշխարհիկ իշխանության հետ՝ կատարելով քաղաքական իշխանության առանձին ֆունկցիաներ։

⁴ Թովմա Մեծոփեցի, Պատմություն, էջ 85։

⁵ Նույն տեղում, էջ 104։

⁶ Նույն տեղում, էջ 107։

⁷ Մամր ժամանակագրություններ, Բ. 1, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 128։

⁸ Լեռ, Հայոց պատմություն, Բ. 3-րդ, գիրք 1, Երևան, 1969, էջ 130։

Բագրատունյաց թագավորության անկումից հետո, երբ հայ ժողովուրդը պետական կազմավորման մակարդակի հասավ Կիլիկիայում, այնտեղ տեղափոխվեց և Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, որի իրավունքները տարածվում էին ողջ Հայոց աշխարհի վրա: Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը 1066 թ. աթոռամիստ դարձրեց Կիլիկիայի սահմանների մոտ գտնվող Մմնդավը: Ավելի ուշ աթոռամիստը տեղափոխվեց մախ Սև լեռան Կարմիր վանք (1105-1116 թթ.), ապա՝ Մովք (1116-1147 թթ.), այնուհետև՝ Հոռմկլա (1147-1292 թթ.) և, վերջապես, Գրիգոր է Անավարզեցին 1293 թ. այն տեղափոխեց մայրաքաղաք Սիս: Կիլիկիայում իր գոյատևության ողջ ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսության ողջ գործունեությունը դրսևորվում է ժողովրդի ինչպես ներքին (հոգևոր, դպրության, մշակույթի), այնպես էլ արտաքին (քաղաքական-միջպետական, դավաճանական-միջեկեղեցական հարաբերություններ) կյանքի ոլորտներում: Թեև սկզբում հայ-քաղկեդոնական, ապա մաս հայ-կաթոլիկ դավաճաքանական խնդիրների շուրջն ընթացող վեճերը Հայոց Կաթողիկոսության գործունեության մեջ կարևոր տեղ էին գրավում, ու չնայած զահակյաններից ունեցած Բյուզանդիայի ու կաթոլիկ Եվրոպայի աջակցությունն ու համակրանքը ստանալու մպատակով մահաճեցին Հայոց Եկեղեցու դավաճաքանական դիրքերից, այնուհանդերձ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը կարողացավ անաղարտ պահել Հայ Առաքելական Եկեղեցու օրենքները՝ ապահովելով Հայոց Եկեղեցու ամբողջական անկախությունը:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, 1375 թ., հրամայական դարձավ Կաթողիկոսության տեղափոխումը: Անդրադառնալով այդ խնդրին, Լեոն սխալմամբ կարծում է, թե Սսի Կաթողիկոսարանը ամեն տեսակ շահատակությունների ասպարեզ դարձավ, որ սրբավաճառությունն այլանդակ չափեր է ընդունել, որ կաշառքի համար փող չունեցող եպիսկոպոսացուն իր կարգը գրավ էր դնում կաթողիկոսի մոտ և այդպիսով ձեռնադրություն ստանում: Այնուհետև մեղադրվում է Կոստանդին Զ Վահկացի Կաթողիկոսը, որի կարգադրությամբ 1439 թ., առանց եկեղեցական ժողով գումարելու, ներկայացուցիչներ ուղարկեց Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին, որոնք պաշտոնապես Հայ Եկեղեցու անունից ընդունեցին կաթոլիկությունը⁹: Իրականում պատճառն այն էր, որ պետականության կորստից հետո Կաթողիկոսությունը, զրկվելով հուսալի պաշտպանությունից, բազմիցս ենթարկվում էր օտար իշխանությունների հալածանքներին: Հայոց Կաթողիկոսությունը կորցրել էր իր քաղաքական հենարանը, իսկ կաթոլիկ Եկեղեցու ունեցածությունների դեմ մղած երկարամյա պայքարի ու երկրամասում հայ բնակչության հետզհետե մոսրացման պատճառներով՝ քայքայվել էր մաս տնտեսապես: Ծանր էր փնակը մաս հոգևոր-մշակութային կյանքում: Դրությունը ավելի վատթարացավ 1426 թվականից հետո, երբ Կիլիկիայի վերջին հայ իշխանավոր Կոստանդինը թողեց Սիսը և բազմահազար արտագաղթողների հետ ապաստանեց Կիպրոս կղզում:

⁹ Լեո, ԶԶ. աշխ., էջ 130-131:

Քաղաքական ու տնտեսական այդպիսի անմասնատ պայմաններում Հայոց Կաթողիկոսությունը անգոր էր օտար երկրներում գոյացած հայկական գաղթօջախների հետ մշտական մշակութային կապեր հաստատելու, ուսումնական կենտրոններ ստեղծելու և տարասփյուռ զանգվածներին ազգային ավանդույթներով շաղկապելու գործում: Մեկուսանալով Կիլիկիայում, եկեղեցին կտրվել էր բնաշխարհի ժողովրդից, մրա համար կորցրել քաղաքական և կրոնական երբեմնի կենտրոնի մշակութային: Նկատի ունենալով այդ հանգամանքները, հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական ու մշակութային առաջադեմ գործիչները դեռևս 14-րդ դ. վերջերից ցանկանում էին Հայոց Կաթողիկոսությունը տեղափոխել ավելի ապահով վայր: Հարկ է մշել, որ այդ գործի մասնաձեռնողը հանդիսացավ Գրիգոր Տաթևացին, որն անհաշտ պայքար էր մղում լատինամոլության ամեն տեսակի դրսևորումների դեմ: Նրա գործի շարունակողները հանդիսացան Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին: Նրանց հաջողվեց համոզել Աղթամարի հակաթող Կաթողիկոս Զաքարիա Գ-ին, որը ցանկություն ուներ ժառանգելու Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը: 1272 թվականից Աղթամարի կաթողիկոսությունը ժառանգած մշանավոր Սեֆեդիյան ավատական տան ներկայացուցիչները, ունենալով զինական ուժեր, կարողացան օտար մվաճողներից պաշտպանել ոչ միայն Կաթողիկոսական Աթոռը, այլև ողջ Վասպուրականը: Եվ ինչպես հետագայում կտեսնենք, նույն Զաքարիային հաջողվում է Կարա-կոյունլու Զհանշահի օժանդակությամբ իր գահակալության տակ կարճ ժամանակով միավորել Էջմիածնի և Աղթամարի Կաթողիկոսությունները: Մինչ այդ Թ. Մեծոփեցին և Հ. Հերմոնեցին շրջաբերականներով դիմում են հայ հոգևոր ու աշխարհիկ երևելիներին՝ մպաստելու իրենց մըտադրության իրականացմանը: Հուշագիր ուղարկվեց մաս Սսի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Մուսաբեկյանին. «... գրեցին եպիսկոպոսունք եւ վարդապետք առ Գրիգոր Մուսաբեկեանց» և հրավիրեցին գալ Էջմիածին, - հայտնում է Թովմա Մեծոփեցին իր ճիշատակարանում¹⁰: Թեև կաթողիկոսը հրաժարվեց մասնակցել Էջմիածնում գումարվող ժողովին, այնուամենայնիվ ստիպված էր համակերպվել: Հաջողվեց ստանալ մաս Երևանի կուսակալ Յուդուք Բեկի համաձայնությունը, որը, Թ. Մեծոփեցու վկայությամբ, անձամբ առաջնորդեց պատվիրակներին ընտրության վայր՝ Էջմիածին, «փողով և թմբուկով»¹¹: Օտար տիրակալի՝ հայ պատվիրակության նկատմամբ ունեցած այս բարեհոժար վերաբերմունքը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ վերջինս պակաս շահագրգռված չէր Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Արարատյան մահանգում տեսնելու. դա միաժամանակ նրան կտար հուսալի հեմարան:

Էջմիածնի մեջ գումարված ազգային ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 1441 թ. մայիսի երկրորդ կեսին, որին, ըստ Թ. Մեծոփեցու, մասնակցում էին ավելի քան 300

¹⁰ Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892, էջ 68:

¹¹ Նույն տեղում:

պատվիրակներ հոգևոր և աշխարհիկ դասից. «... ազատք եւ որդիք ազատաց, ձեռնառք եւ տանուտէրք», այդ թվում հաճախեց չորս արքեպիսկոպոս՝ «Գրիգոր Եպիսկոպոս Արտազ գաւառի՝ առաջնորդ ուխտին Թադէոսի, Օմատն եպիսկոպոս Սիսականի՝ առաջնորդ ուխտին Տաթեւո, Գրիգոր եպիսկոպոս՝ առաջնորդ Հաղբատայ, Յովհաննէս եպիսկոպոս՝ առաջնորդ Բջնոյ, որք էին առաջնորդք չորից Աթոռոց, որոց հաւանութեամբ լինէր ընտրութիւն կաթողիկոսի»¹²: Մասնակցում էին նաև 13 եպիսկոպոս, 21 վարդապետ, ինչպես նաև այլ հոգևորականներ, տանուտերեր, ձեռնավորներ: Որոշ բարձրաստիճան հոգևոր գործիչներ էլ, ինչ-ինչ պատճառներով չկարողանալով մասնակցել, ուղարկել էին իրենց համաձայնագրերը: Քաճի որ Սսի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Մուսաբեկյանը հրաժարվել էր ներկայանալ և վերածովել, ուստի առաջադրվել են այլ թեկնածուներ: Առաջադրվեցին Աղթամարի Կաթողիկոս Զաքարիան, Հավուց Թառի եպիսկոպոս Զաքարիան, Արտազ գավառի եպիսկոպոս Գրիգոր Զալաբեկյանը և Վայոց Ձորի Հերմոն վանքի վանահայր Հովհաննէս Հերմոնցի վարդապետը: Հավանաբար կողմերից և ոչ մեկը չի հավաքում անհրաժեշտ քվե պարունակող ձայներ, ուստի և որոշում են կաթողիկոս ընտրել չեզոք մի անձի: Ընտրությունը կանգ է առնում Ակոռի գյուղի Ս. Հակոբ վանքի վանահայր Կիրակոս վարդապետ Վիրապեցու վրա: 32 տարի շարունակ նա եղել էր Խոր-Վիրապ վանքի վանահայրը, որտեղից և ստացել էր «Վիրապեցի» անունը: Վերջինիս օծում են եպիսկոպոս և հաստատում Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահին: Այսպիսով, դարավոր դեգերումներից հետո Ամենայն Հայոց ընդհանրական Աթոռը վերահաստատվում է Էջմիածնում: Դա քաղաքական ու ազգային-պատմական նշանավոր իրադարձություն էր հալ ժողովրդի կյանքում:

Կիրակոս Վիրապեցին, որ բնութագրվում է «այդ խոնարհ եւ հեզահոգի, զգաստ ի բանս իւր եւ ի ճգնողական վարս, խոհական խորհրդով եւ վարժ յիմաստս աստուածային գրոց»¹³ արտահայտություններով, հովվապետության հենց առաջին օրվանից ձեռնամուխ է լինում բարեմորոգչական աշխատանքների իրականացմանը. «... ձեռն էարկ եւ ի շինութիւն վանորէից եւ եկեղեցաց, եւ մորոգեցաւ զտաճարն Էջմիածնի, եւս եւ Հոփսիսիմեայ, եւ Գայիանեայ ջանայր վայելչացուցանել զԱթոռն, եւ ի յանգորոս պահել զառաջնորդս ազգին»¹⁴: Վիրապեցին փորձում է արգելել մենոմի վաճառահամման գործընթացը և այն դարձնել միայն Էջմիածնի մենաշնորհը. «... մի ոք իշխեսցէ յայսմ հետէ աստուածավաճառութիւն առնել, այսինքն զմեռոնն կամ զքահանայութիւնն վաճառել»¹⁵: Այնուհանդերձ, Վիրապեցուն չհաջողվեց կացությամբ տիրապետել, և երկու տարի անց ստիպված էր հրաժարական տալ:

¹² Նույն տեղում, հմմտ. Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 486-487:

¹³ Մ. Չամչյան, նշվ. աշխ. էջ 488:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 489:

¹⁵ Մատենադարան, ձեռ. 4669, ք. 203բ:

Երևանի կուսակալ Յաղոբ Բեկի համաձայնությամբ կաթողիկոս առաջադրվեց Գրիգոր Ժ Զալալբեկյանը (1443-1465 թթ. «Մակվեցի»), որն ավելի փութաջանորեն շարունակեց Կիրակոս Վիրապեցու շինարարական-բարեկործանական գործունեությունը. «... փոյթ կալաւ ի գլոյս տանիլ զմորոգութիւն շինուածոցն, յորս բունն հարեալ էր Կիրակոս եւ յաւել եւս մորոգել զվանս Էջմիածնի, ժողովեալ ի նպաստ այսր ամի բազում դրամս յիշխանաւորացն հայոց»¹⁶: Քաջ գիտակցելով, որ Էջմիածնի հեղինակության բարձրացման համար անչափ կարևոր է նրա տնտեսական կարողությունների ընդլայնումը, Գր. Մակվեցին ձեռնամուխ եղավ կալվածական հարկատվություն ձեռք բերելուն: Անդրադառնալով Գր. Մակվեցու՝ յոթ գյուղերի (Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոհնք, Նորազավիթ, Աղավնատուն, Քիրաջլու, Մուղնի) սեփականության իրավունքի ձեռքբերման մանրամասներին, Լեոն սխալմամբ այն տարածում է վերջինիս կաթողիկոսական տարիների վրա¹⁷: Իրականությունն այն է, որ դեռևս 1431 թ., երբ Գրիգորը պաշտոնավարում էր այլ վայրում, Կարակոյունլու Իսկանդարի արքունիքում բարձր դիրքի արժանացած («գերափառ բարձրիշխան, հուշակալոր, մերձաւորագոյնն մեծին փառիշահի, բարձրապաշտօն մեծ վեզիրն, գլխաւոր արքունի խորհրդական»¹⁸) Ամիր Ռուստամը, որը Օրբելյան իշխանական տոհմից էր, օգտվելով իրեն ընձեռնված հնարավորություններից, ձևակերպել է նշված գյուղերի վաճառքը և ապա գնող Գրիգոր Մակվեցու կողմից դրանք մվիրել Էջմիածնի վանքին: Պետք է ենթադրել, որ Ռուստամ Օրբելյանը ցանկություն է ունեցել Այրարատյան աշխարհում ստեղծել հայկական վասալ իշխանություն, ինչպես նաև ամուր մյութական հեմարան ստեղծել եկեղեցական համագգային կենտրոնի համար:

Ընդհանուր առմամբ Գր. Մակվեցին ևս անկարող զտնվեց տիրապետելու իրադրությունը: Ավելին, նա չկարողացավ նույնիսկ օգտվել Զհանջահի՝ դեպի կաթողիկոսական Աթոռն ունեցած մեղմ վերաբերումներից: Կաթողիկոսի միապետական իշխանությունը վերացավ այն բանից հետո, երբ վերջինիս կարգադրությամբ Արիստակես վարդապետը նշանակվեց փոխամորդ. «...նեղեալ ի բռնութիւնէ այլազգեաց՝ որք պահանջէին բազում հարկս ի հայրապետանոցէ, եւ ոչ կարելով առանձին տանիլ զվիշտս ազգի տառապանաց՝ ընտրեաց իւր գործակից զոմն ի վարդապետաց Արիստակէս անուն, յանձն արարեալ ի ձեռս մորս գիող արտաքին կառավարութեան՝ կարգեաց զնա փոխամորդ եւ երկրորդ իւր»¹⁹: Նման պատճառաբանությունը դարձյալ խոսում է կաթողիկոսի անվճռականության մասին: Փորձելով ար-

¹⁶ Տե՛ս Մ. Զամյան, նշվ. աշխ., էջ 491:

¹⁷ Լեո, Հայոց պատմություն, հ Գ, գ.1, էջ 137: Նույնը սխալմամբ կրկնում է Հար. Արքահայանը, տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների մասին արխիվային վավերագրեր», կազմեց Հար. Արքահայանը, Երևան, 1941, էջ 12 (այսուհետև՝ Կալվածագրեր):

¹⁸ Կալվածագրեր, էջ 12:

¹⁹ Տե՛ս Մ. Զամյան, նշվ. աշխ., էջ 501:

դարացնել Գր. Մակվեցու այս որոշումը՝ Մ. Օրմանյանը գրում է. «Այս կացութեան բուն նպատակն էր զանազան ազդեցիկ եկեղեցականներու փառասիրութիւնը շաբիւ. իսկ օգտակար կողմը եղաւ Աթոռոյ յաջորդութիւնը ապահովել»²⁰։ Թե ինչպես ապահովվեց Աթոռի հաջորդությունը, ցույց տվեցին հետագա դեպքերը։ Օգտվելով կաթողիկոսի անկարողությունից, Կարապետ Եվդոկացի եպիսկոպոսը, որն ուներ Ամենայն Հայոց Կաթողիկոսության հավակնություն, չճանաչելով Էջմիածնի գերագահությունը, 1446 թ. Սիս քաղաքում հիմնադրում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունը, որը նշանակում էր Հայոց Եկեղեցու պառակտում։ Գր. Մակվեցու անկարողությունը հասցրեց այն բանին, որ 1460 թ. կաթողիկոսական փոխանորդ Արիստակես վարդապետը ընթուստանում է նրա դեմ և զրկում լիազորություններից. «... մինչեւ զօրացաւ Արիստակես, եւ ինքնին վարէր զիշխանութիւն հայրապետութեան»²¹։ Իր հերթին, Սարգիս վարդապետը, որին Գր. Մակվեցին նշանակել էր աջատարի պաշտոնում, գողանալով Լուսավորչի Աջը, աճապարում է Թալիթ՝ նպատակ ունենալով տեսակցել Ջհանշահի հետ ու ստանալ նրանից Կաթողիկոսական Աթոռում հաստատվելու աջակցություն։ Աղթամարի Ջաքարիա Կաթողիկոսը, սակայն, կարողանում է ավելի շուտ տեսակցել Ջհանշահի հետ և, ունենալով վերջինին կնոջ՝ Բեկում Խաթունի աջակցությունը, 1461 թ. հաստատվում է Հայոց Կաթողիկոսական Աթոռին։ Ջհանշահի ցանկությամբ Սարգիս վարդապետը օծվում է եպիսկոպոս ու նշանակվում փոխանորդ։ Նույն թվականին Ջհանշահը 12000-անոց հեծելազորով շարժվում է Բաղեշ՝ ճնշելու Միջագետքում և Արևմտյան Հայաստանում ընթուստացած Ակ-կոյունլու թուրքմեններին ու քրդերին։ «Ընդ այնմ ժամանակին, - գրում է Առաքել Դավրիժեցին,- եղեւ ցասնուլ փառշահին ի վերայ ամիրային Բաղիշու եւ բարկութեամբ առաքեաց Դ զորագլուխս երկոտասան հազար հեծելազօրօք ի վերայ քաղաքին Խլաթայ, եւ գնացեալ աւարեալ քանդեցին զնա եւ բազում աւար ի մի ժողովեալ նստան ի վերայ բերդին եւ նեղէին յառնուլ զնա զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղեշ, եւ ի Մուշ, ի Խուք եւ ի Սասունք եւ յամենայն գաւառսն նոցա»²²։ Արշավանքի ընթացքում առաջին հերթին կոտորվելու ու գերեվարվելու էր տեղի հայ բնակչությունը, որն էլ զիտակցելով՝ Ջաքարիա Կաթողիկոսը աճապարում է միջնորդի դեր խաղալ Ջհանշահի ու Բաղեշի ամիրայի միջև, ինչը որ նրան հաջողվում է։ Զգալով, որ Ջաքարիան վաղելում է Ջհանշահի վստահությունը, և օգտվելով այն հանգամանքից, որ վերջինս զբաղված է Օիրագում իր որդու՝ Փիր-Բուտաղի ապստամբությունը ճնշելով, Գրիգոր Մակվեցին և Արիստակես աթոռակալը, իրենց հետ ունենալով մի քանի հայ երևելիների, մեծաքանակ նվերներով 1462 թ. ուղևորվում են Նախիջևան, տեղի կուսակալ, Ջհանշահի մյուս որդի Հասան-Ալու մոտ։ Խոստանալով հարկերի պարբերաբար վճարում,

²⁰ Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 98:

²¹ Տե՛ս Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 503:

²² Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 421:

Գր. Մակվեցին հասնում է այն բանին, որ Հասան-Ալին ուղևորվում է Արարատյան երկիր՝ Զաքարիային հետաքննելու, ինչպես նաև կաթողիկոսության ունեցվածքը կողոպտելու նպատակով: Տեղեկանալով այդ մասին, Զաքարիան վերցնելով Լուսավորչի Աջն ու հարստությունները՝ աճապարում է Աղթամար: Կաթողիկոսությունը կրկին ստանձնում է Գրիգոր Մակվեցին: Վերջինիս մահից հետո, 1465 թվականից կաթողիկոսության տեղապահի կարգավիճակով հովվապետեց Արիստակես աթոռակալը՝ տեղապահ ունենալով Սարգիս վարդապետին:

Արիստակեսի աթոռակալության տարիներին կրկին սրվեց հակամարտությունը Կարա-կոյունլու և Ակ-կոյունլու ցեղախմբերի միջև: 1467 թ. մայիսին Ջհանշահը մի խոշոր բանակով արշավեց դեպի Ամիդ, որը Ակ-կոյունլուների աթոռամիստն էր: Վեց ամիս շարունակ ասպատակելով Վասպուրական աշխարհում ու Տարոնում, Կարա-կոյունլուները այնտեղ միայն ավերածություններ ու կոտորածներ էին սրբի-նում: Ժամանակի ձեռագրերից մեկը այդ մասին հայտնում է. «Արդ, գրեցաւ ի թվիս հայոց Զ և ԺԷ (1468) ի դառն եւ ի դժար ժամանակի, զի յայսմ ամի ել Ջհանշայ դանն ի քաղաքէն շահաստանայ, որ է Թալիզ. բազում հեճի գաւառք եւ կամեր երթալ ի վերայ քաղաքին Ամթայ. եւ ի յերթալն ի ճանապարհին բազումք դողային ի յահէ, զի այս Ջհանշայս բազում գաւառաց եւ ի քաղաքաց տիրէր: ... Եւ արեւելք եւ արեւմուտք ի յահէ սրոյ սորայ դողային. եւ մնամ թէ հիւսիս եւ հարաւ ի հարկապահանջութիւն էր սորայ: ... Արդ, ի չուել ճանապարհի սորա բազում գաւառք ւանդեցան եւ բնակիչք գաւառացն փախչէին ի յայրս եւ ի ծերպս վիմաց հովալլուկ մեռանէին: Եւ եկեալ եհաս ի գաւառն Տարաւնոյ ի դաշտն Մշոյ. եւ անդ բազում ւանդս արարին գաւառն անոռ, զի բազում էին եւ անհամար եւ ոչ ճանաչէին զԱստուծ, եւ ասէին, թէ ինչ է քրիստոնէայն, եւ քրիստոնէին աչք եւ բերան կալ: Եւ դիմեցին ի վանքն Ղազարու եւ զյուսարարն խորովեցին ի կրակն եւ մահատակեցին անցին գնացին»²³: Աղբյուրների լուսությունը Արիստակեսի գործունեության մասին բացատրվում է նրանով, որ վերջինս ոչինչ չի ձեռնարկել հայ բնակչության կյանքը ապահովելու համար, ինչպես դա կատարեց Զաքարիա Կաթողիկոսը: 1467 թ. նոյեմբերի 10-ին Ճապաղջոր գետի մոտ, Սանջախ կոչված վայրում, Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի զորքերը պարտության են մատնում Ջհանշահին, սպանում նրան, իսկ հաջորդ տարում հաղթելով նաև Կարա-կոյունլու վերջին տիրակալ Հասան-Ալուն՝ Հայաստանի թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան մասերում հաստատում են իրենց տիրապետությունը²⁴:

Ակ-կոյունլու Ուզուն Հասանի իշխանության հենց առաջին տարում Էջմիածնի հովվապետությունը ստանձնած Սարգիս Բ Աջատարը (1469-1474 թթ.) իր գործունեությունը սահմանափակեց միայն Լուսավորչի Աջը Աղթամարից Էջմիածին տե-

²³ Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 171-172:

²⁴ Գ. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997, էջ 114-117:

դափնեհավոր խնդրով: Դա հաջողվեց իրականացնել միայն 1477 թ., երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր Հովհաննես Է աջակիրը (1474-1484 թթ.): Մինչ այդ Հայոց երկիրը կրկին ենթարկվեց դաժան փորձության: 1472 թ. փորձելով կանխել օսման-թուրքերի օրեցօր աճող հզորությունը և պահել իր հեզեմոն դերը Առաջավոր Ասիայում, Ուլուն-Հասանը 100.000-անոց բանակով Դերջանի ու Երզնկայի վրայով շարժվեց Թոխաթ-Եվդոկիա ուղղությամբ: Պատերազմական գործողությունները ուղեկցվում էին բնակավայրերի ավերմամբ, հայ բնակչության մասսայական կոտորածով ու կողոպտուտով: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Ուլուն-Հասանի մոտ վեմենտիկի դեսպան Կատերինո Ջենոն: Նա գրում է. «Պարսկական բանակը (իմա Ուլուն-Հասանի – Հ. Թ.) մտավ Դերջան սեպտեմբեր ամսին, հուր ու սուր տարածեց այդ երկրում, մոտ ու հեռու, կողոպտելով ու կոտորելով ժողովրդին, ահաբեկելով բնակչությանը, այնպես որ ամեն ոք փախավ այդ փոթորկից: Եվ անցնելով Երզնկա ու Թոքատ, մույն կատաղությամբ ամեն տեղ այրեց քաղաքներն ու գյուղերը»²⁵: Չնայած ունեցած մասնակի հաջողություններին, Ուլուն-Հասանի ճակատագիրը վճռվեց 1473 թ. օգոստոսի 12-ին օսմանյան թուրքերի հետ Դերջանի դաշտում տեղի ունեցած երկրորդ ճակատամարտում, ուր մա ծանր պարտություն կրելով՝ մահանջեց Թավրիզ: Օսմանյան թուրքերին անցավ Մեծ Հայքի Էրզրումի, Կամախի, Դերջանի ու Բաքերդի շրջանները: Ուլուն-Հասանի մահից հետո (1478 թ.) նրա ստեղծած հսկայածավալ պետությունը ապրեց ցնցումներով լեցուն մի ժամանակաշրջան, երբ նրա հինգ որդիների միջև ծավալվեցին զահակալական կռիվներ²⁶: Կարճ ժամանակահատվածով հակամարտ տիրակալները փոխարինեցին միմյանց և 15-րդ դ. վերջին Ակ-կոյունլուների իշխանությունը վերջնականապես կործանվեց: Այս ընթացքում Էջմիածնի հովվապետական Աթոռին բազմած Սարգիս Գ-ն (1484-1515 թթ.) իր գործունեությամբ ոչնչով աչքի չընկավ: Ավելին, ինչպես վկայում է 1499 թ. Արծկեում գրված հիշատակարանում Հակոբ գրիչը, Սարգիս Կաթողիկոսը հալածանքներից խուսափելով ապաստանեց Հաղպատի վանքում²⁷:



²⁵ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 165:

²⁶ Տե՛ս Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ., կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 56, 60, 96, 99, Մամր ժամանակագրություններ, հ.1, էջ 194:

²⁷ Ժե դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 276: